ՀԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒԶԱՆ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԳՐՔՈՒՅԿԸ

Գարեգին Լեւոնյանը (1872-1947 թթ.) կրթությունն ստացել էր նախ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում, այնուհետեւ՝ Լայպցիգի (Գերմանիա) համալսարանում, հայրենիք վերադառնալուց հետո 1901-1906 թթ. գեղարվեստի պատմություն եւ նկարչություն է դասավանդել Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: Նա հիմնականում հայտնի է որպես գրականագետ, արվեստաբան, երաժշտության ու մամուլի գիտակ: Իր հանճարեղ բարեկամ Կոմիտասի աջակցությամբ 1908 թ. նա հիմնադրում եւ մինչեւ 1921 թ. խմբագրում ու հրատարակում է «Գեղարվեստ» հանդեսը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Լեւոնյանը հրավիրվում է Երեւանի պետական համալսարան՝ արվեստի պատմություն դասավանդելու:

Մատենադարանի գրադարանի պահոցներում կատարած մեր պրպտումների ընթացքում անսպասելիորեն հանդիպեցինք Գարեգին Լեւոնյանի հեղինակած «Գծագրութիւն եւ նկարչութիւն» մեթոդական ձեռնարկին՝ տարրական դասընթաց՝ հրատարակված 1904 թվականին (Թիֆլիս, «Հերմես» հրատարակչություն): Ասում ենք անսպասելի, քանի որ այդ դասագրքի մասին բնավ խոսք չի եղել ո՛չ Լեւոնյանի կենսագրական նյութերում եւ ոչ էլ հայ մանկավարժության պատմությանը նվիրված գրականության մեջ: Պարզվում է, որ երիտասարդ արվեստագետը ոչ միայն տեսականորեն մտահոգված է եղել հայ մանուկների ուսուցման գործով, այլեւ ինքն անձամբ կազմել եւ հրատարակել է ձեռնարկ, որ մեզ հայտնի է դառնում Մատենադարանում եւ գրականության թանգարանում պահվող մեկական օրինակով: Մեր որոնումները Հայաստանի հանրային գրադարանում, Գիտությունների ազգային ակադեմիայի եւ քաղաքային մի շարք գրադարաններում, բացարձակապես ապարդյուն անցան: Ոչ մի տեղ այդ գրքի մասին լրացուցիչ տեղեկություններ չգտանք: Գրքի վերջին էջում կա ծանոթագրություն, ըստ որի առաջին մասից հետո հեղինակը հաջորդաբար լույս է ընծայելու հետեւյալ հատորյակները. 1. «Գծագրութիւն եւ նկարչութիւն»՝ Բ մաս, մեթոդական ցուցում միջին դասարանների համար, հրահանգ նկարչութեան. հեռապատկեր. ստուերներ: 2. «Գծագրութիւն եւ նկարչութիւն», Գ մաս, բարձր դասարանների համար: 3. «Նկարչութեան դասաւանդման եղանակը» (իմա՛ մեթոդները): 4. «Փորագրման արուեստ»՝ սիրողների համար:

Ըստ էության, հրատարակված եւ նախատեսված հինգ գրքույկները մեկ ամբողջություն էին կազմելու՝ դպրոցների ու ճեմարանների սաներին նկարչություն սովորեցնելու, գաղափար տալու նրա տեսական առանձնահատկությունների մասին, նաեւ՝ գործնական ցուցումներ արհեստների տիրապետման, դրանց մեթոդների ու գաղտնիքների վերաբերյալ:

Մեր ձեռքի տակ գտնվող առաջին՝ 1904 թ. գրքույկի առաջաբանում հեղինակի խորհրդատվական խոսքն է.

«Ներկայ դասագիրքը, որ բաղկացած է երկու մասից, կազմուած է գլխաւորապէս Գէորգեան ճեմարանի եւ մեր միւս հոգեւոր դպրոցների համար: Նկարչութեան ուսուցչի վրայ է ծանրանում գծագրութեան ու նկարչութեան գործնական պարապմունքների հետ՝ ծանօթացնելու իր աշակերտներին նաեւ առարկայի տեսական- գիտական մասը:

Պէտք է սովորել նախ գծագրութիւն, ապա նկարչութիւն: Գծագրութիւնը նկարչութեան հիմքն է. ամեն մի նկար, ամէն մի ձեւ կազմուած է գծերից. ուրեմն գծերի, անկիւնների, ձեւերի հետ ծանօթանալով, ձեզ դժուար չի լինի սկզբում նկարներ ճշտութեամբ ընդօրինակելը, այնուհետեւ, սովորելով երկրաչափական մարմինները եւ հեռապատկերը՝ բնականից առարկաներ ու տեսարաններ նկարելը:

Այդ դասագիրքն օգնութեան կհասնի ձեզ նաեւ աշխարհագրութեան ժամանակ, սովորեցնելով մասշտաբի գործածութիւնը, յատակագիծ եւ քարտէզներ նկարելու եղանակը: Իսկ երկրաչափութեան դասերին հասնելիս, դուք աւելի հեշտ կըմբռնեք ձեզ համար այդ նոր գիտութիւնը, քանի որ այս գրքով արդէն բաւարար ծանօթացած կլինէք գծերի, ձեւերի եւ մարմինների հետ:

Գրքի վերջում միասին հաւաքուած են գծագրութեան ու նկարչութեան վերաբերեալ բառերը՝ իրենց ռուսերէն թարգմանութեամբ, որ կարող է պիտանի լինել Ձեզ»:

Ինչպես տեսնում ենք նկարչության ընդհանուր համակարգի ուսուցման մեջ Գ. Լեւոնյանը սկզբնական, նախնական տեղ է հատկացնում գծագրությանը: Բնականաբար հիշյալ գրքույկների շարքից առաջինը Գ. Լեւոնյանը նվիրել է գծագրությանը: Ուստի, նախքան նկարչության հատվածներին անցնելը հետեւելու ենք հեղինակի խորհրդին՝ համառոտակի ներկայացնելով առաջին գրքույկը:

Դասագրքին ծանոթանալիս նկատեցինք, որ Գարեգին Լեւոնյանն ակնարկում է հայկական դպրոցներում գծագրության՝ առանձին եւ նոր առարկա լինելը: Հայտնի է, որ միջնադարյան եւ ուշ միջնադարյան դպրոցներում ու համալսարաններում գծագրության առանձին առարկա չի եղել: Այդ նյութն ընդգրկված էր երկրաչափության մեջ՝ սերտորեն կապված նկարչության հասկացությունների հետ: Նման պարագային կուզեինք իմանալ՝ արդյոք Գ. Լեւոնյանի աշխատանքն առաջի՞ն դասագիրքն էր մեզանում, թե ոչ. եւ ընդհանրապես, ի՞նչպիսի վիճակ է եղել XVII-XIX դարերում: Այս դեպքում էլ Մաշտոցի անվան Մատենադարանի հին գրականությամբ հարուստ հավաքածուում մեզ հաջողվեց գտնել գծագրության առաջին հայերեն դասագիրքը, մի բան, որի մասին մասնագիտական գրականության մեջ որեւէ բանի չենք հանդիպել: Այդ գիրքը Վաղարշապատում 1874 թ. հրատարակել է Մակար Տեր-Սարգսյանը «Համառօտ ձեռնարկ գծագրութեան հայ ուսումնարանների համար» վերնագրով: Գրքի առաջաբանում աշխատասիրողը գրել է. «Աչքի առաջ ունենալով մեր ուսումնարանների դասագրքերից զուրկ լինելը եւ դրանից առաջացած վնասակար ազդեցութիւնը հայ մանուկների վրայ, պարտք համարեցինք մեր կարողութեան չափ օգնել նրանց՝ ընծայելով մեր «Համառօտ ձեռնարկ գծագրութեան» կոչուող գիրքը, որով յոյս ունեմ օգնել մասամբ հայ մանուկներին: Դասագրքի մէջ մենք հետեւել ենք գլխաւորապէս Գլաւինսկու «Начало линейного черчения», Սկինոյի «Тетрадь черчения практической геометрии» անվանյալ երկու գրքերին»:

Այս դասագիրքը կարդացվել է Ալեքսանդրապոլի երկսեռ դպրոցաց ուսուցչական ժողովում: Դասագրքի առաջին մասը, որը բովանդակում է իր մեջ խոսակցություններ կանոնավոր մարմինների մասին՝ իբրեւ առարկայական դասախոսությունների շարք պետք է ավանդվեր նախակրթարանում՝ հայոց լեզվի հետ միասին. «Այս ժամանակ դասագիրքը ուսուցիչների ձեռքում միայն պէտք է մնայ: Որովհետեւ մեզանում չեն եղել մինչեւ այսօր այս առարկայի վերաբերեալ դասագրքեր, ուստի եւ գրքի վերջում դնում ենք մեր գործածած այն բառերի ռուսերէն թարգմանութիւնը, որ կարծում ենք, թէ խորթ կթուին ուսուցչաց եւ աշակերտաց: Գծագրական ձեւերի փորագրութիւնները, փորագրիչ չգտնելուց, ստիպուած ակամայ կամօք մենք ինքներս ենք արել»:

Մաթեմատիկական գիտությունների պատմության մեջ հայերեն գծագրության առաջին դասագրքի[1] բովանդակության եւ ուսուցման մեթոդների քննությունը թողնելով մասնագետներին, ստորեւ կարող ենք արձանագրել միայն դասագրքում նյութերի մատուցման պատկերավոր ու անմիջական բնույթը, միաժամանակ կարեւորելով սկզբնօրինակ ծառայած ռուսական գրքի փաստը:

Տասը տարի անց՝ 1884թ. Թիֆլիսի Շահվերդյան լրագրական գործակալության տպարանում «Շարք սկզբնական դասագրքերի» մատենաշարով (թ. 1) լույս է տեսնում Աբիսողոմ Հովհաննիսյանցի եւ Աբրահամ Ցեյտլինի «Գծագրութեան դասագիրքը»: Առաջաբանից իմանում ենք, որ դա հայերեն երկրորդ դասագիրքն էր: Ընդ որում, նրանք նպատակ են ունեցել ճշգրիտ գիտությունների վերաբերյալ հաջորդաբար հրատարակել դասագրքեր: Այս դեպքում եւս այդ ծրագիրը սկսվում է «Գծագրութեան դասագրքի» հրատարակմամբ:

«Գծագրութեան կանոնաւոր դասատուութիւնը իբրեւ զարգացողական միջոց եւ իբրեւ արուեստ, - գրում են հեղինակները, - վաղուց արդէն ընդունուած է ուսումնարանների մէջ աւանդողող առարկաների շարքում: Մեր այն ուսումնարանների մէջ եւս, ուր բարեկարգութիւնը եւ առաջադիմութիւնը ոտք է դրել, այդ արուեստի վրայ ըստ կարելւոյն ուշադրութիւն են դարձրել. մինչդեռ նրան աւանդելու համար ձեռնարկ համարեա միակ մէկ հատն ունենք մինչ այսօր (նկատի ունեն Մ. Տեր-Սարգսյանի գծագրության ձեռնարկը – Ռ. Փ.): Դիտաւորութիւն ունենալով մաթեմատիկական գիտութեանց վերաբերեալ մի շարք դասագրքեր հրատարակել, սկսում ենք նախ տպագրութեան յանձնել ներկայ ձեռնարկը»:

Այնուհետեւ կրկնվում են գծագրության մասին հայտնի մտքերը՝ գծագրության դասավանդումը նպաստում է ճշգրիտ գիտությունների, մասնավորապես երկրաչափության եւ նկարչության առարկաների դասավանդմանը, օգնում այն ընկալելուն: «Դա օգտակար է նաեւ այն պատանիների համար, - շարունակում են նրանք, - ովքեր կեանք մտնելով՝ ստիպուած են վարժուելու արհեստների մէջ՝ հիւսն, որմնադիր, դերձակ, ասեղնագործ, փականագործ, կոշկակար եւ այլն: Վերջիններիս համար միշտ էլ անհրաժեշտութիւն է լինում այս կամ այն գծագրական նախագիտելիքներ ունենալը»: Ավելին, դասագրքի հեղինակները նշում են, որ նույնիսկ անխոնջ աշխատող մայրերին եւ քույրերին եւս անհրաժեշտ է դա, որոնք առիթ պետք է ունենան կար ու ձեւ անելու: Ի տարբերություն Մակար Տեր-Սարգսյանի, 1884 թ. ձեռնարկի հեղինակները գրքին անհրաժեշտ գծագրումները աւելի մեծ չափերով ու առանձին տեսրակով հանձնարարել են կատարելու վարժ փորագրողի:

---

1 Այդ ուշագրավ երեւույթի մասին մեզ որեւէ ակնարկ հայտնի չէ:

Երկրաչափության հայերեն առաջին գիրքը օգտվել է ռուսական սկզբնօրինակից: Իսկ ռուսակա՞նը: Իսկ Եւրոպայո՞ւմ: Առաջին անգամ ֆրանսիացի Ժերար Տեսարկը 1642թ. մշակեց աքսիոնոմետրիայի դասընթացը: Բրուկ Թեյլորը 1719թ. հրատարակեց հեռանկարի մասին իր աշխատանքը: Վերջապես 1794թ. Գասպար Մոնժը բարձրագույն դպրոցների համար պատրաստեց գծագրական երկրաչափության գիրքը: Գծագրության, որպես առանձին առարկայի ձեւավորման գործում որոշակի նշանակություն ունեցան մաթեմատիկայի խնդիրների միանգամայն նոր մեկնաբանությունները եւ ճարտարագիտական հիմունքների որակական զարգացումը:

Ահա, այդ ոլորտի իմացությունների ու հրատարակված գրքերի խորքի վրա պետք է գնահատել Գարեգին Լեւոնյանի ուսումնամեթոդական բնույթի ձեռնարկը:

Ինչպես սկզբում ասվեց, դասագիրքը կազմված է դպրոցի ստորին դասարանների սովորողների համար: Ներկայացվում են տարրական գիտելիքներ. **ա**. գծերի եւ անկյունների մասին. **բ**. ձեւերի մասին եւ **գ**. պարզ մարմինների մասին: Այն պարագան, որ դասագիրքն ուղղված է մանկահասակ աշակերտներին, թելադրել է հեղինակին սահմանումները ներկայացնել պարզ եւ մատչելի ձեւով: Բերենք մեկ օրինակ Գլավինսկու դասական համարվող «Գծային երկրաչափության սկզբնավորումը» դասագրքից՝ գծի կառուցման մասին. «Գիծը գոյանում կամ կազմվում է կետերից – նշում ենք մի կէտ, նրա մոտ երկրորդ կետը, երրորդ կետը, չորրորդ կետը՝ տալով այս կետերին որեւէ ուղղություն, կստանանք մի ամբողջ կետերի կարգ, որին եւ ասում ենք գիծ»: Փոքրահասակ երեխաների համար Գարեգին Լեւոնյանի առաջարկած սահմանումը ավելի մատչելի է թվում. «Եթէ միմեանց շատ մօտ կէտերը շարենք կամ միեւնոյն կէտը տեղից շարժելով շարունակենք, կստանանք գիծ: Օրինակ՝ եթէ փոքրիկ գնդակը ընդունենք որպէս կէտ եւ թաթախելով թանաքի մէջ գլորենք թղթի երեսով, նրա գլորուած տեղում կստացուի գիծ. ուրեմն գիծը ստացում է կէտերի շարունակութիւնից»: Այս եւ հաջորդ լեւոնյանական ձեւակերպումները հիշեցնում են Անանիա Շիրակացու թվաբանության դասագրքի խնդիրների բացատրության մեթոդը: Այն ավելի պատկերավոր ու հիշողության համար դյուրին դարձնելու համար գրքի հեղինակը խնդիրները երբեմն համեմում է ժողովրդական բանահյուսության, առասպելների կամ ասույթների օրինակներով. այսինքն տեղայնացնում, ժողովրդականացնում է նյութը:

Այսքանով Գարեգին Լեւոնյանն ավարտում է նկարչության ուսուցման իր ծրագրի առաջին հատվածը՝ «Գծագրութիւն եւ նկարչություն», որին պիտի հաջորդեին երեք գրքույկ՝ նվիրված կերպարվեստին. «Հրահանգ նկարչութեան. հեռապատկեր. ստուերներ. գոյներ», «Նկարչութեան դասաւանդութեան եղանակը», «Գեղագիտութեան դասաւանդութեան եղանակը»: